

սի դէաքներում աշխերին տրուում է պարգևներ: Կթելու ժամանակ պահպանուում է վերէն աստիճանի մաքրութիւն: Կթելուն պէս կաթը զրուում է սառուցի մէջ եւ այդ ժառով էլ տարուում է ընկերութիւն գրասեննակը: Խոկ այդտեղ վիրոշում են կաթից եւ ընուութեան ենթարկում: Ենտոյ կաթը քամում են աւազից շինած զուոց (filter), որի ստորին շերտը ծածկուած է ոսպաշափ աւազի հատիկներով, իսկ վերի շերտը բռնուում է աւելի մասք աւազ:

Ցարմաքեցրած գործիքների մէջոցով քամնը կատարուում է ցածից վերևէ Դորանից յայտնուում է, որ կաթը պարունակում է մեծ քանակութեամբ կեղս: Ենույ կաթը ածում են մի լիտրանց շլչերի մէջ, որոնց նախապէս սօզայով լուսուում եւ արտահանուում են նոոսդ գոլորշիով: Երշնիք լուսանլու կատարուում է մեծնաներով՝ պատուույ խոզանակների մէջոցով: Բարի ընկերութեան գրասեննակում ընկերուց, կաթը ընուում է սաւ պրօֆեսօր Թօրի (Bohr), որի զեկուցումները տպուում են ամենայն ամիս:

Սուօքնումն ընկերութիւնը վաճառում է իր եւ ուրիշների կաթը. երկու գոմում գտնուում են 550 կով: Կովանորդների պատերը եւ յատակը շինած են ցեմենտից. ոյս թափանցում է մեծ քանակութեամբ, իսկ օդափոխութիւնը շատ լաւ է: Միակ անյարմարութիւնն այն է, որ համարեա թէ ամրող տարին կովերը դուրս շնու զալիս գոմերից: Կաթը քամնը եւ բարակ, թափանցիկ շղարշով եւ անժնում պղնէծ մաղի մէջով. ապա զնում են սառութիւնը մէջ: Կովերին նոյնպէս ընուում է անասնարութը եւ հրանցներին բաժանուում առողջներից: Պատուում են միայն շատը կովերը, իսկ 2-5 ծնրանցից յետոյ վաճառուում են: (The Lancet 1894թ.).

Թէ դիակներու ոքչափ ապականուած են մեծ քաղաքների գետերը, երեւում է Տիտեալ տեղեկութիւններից: 1895 թ. Սենա գետից հանել են զանազան զիակներ՝ 5632 շուն, 5507 կատու, 9108 մեծ մզներ, 1720 հաւ եւ փասեան, 5932 զանազան թոշուններ, 4209 ծագար, 789 խոզ, 7 նորթ, 4 ոզնի, 55 ծի, 45 ոչխար, 2 մորուկ ծիու, 45 կապիկ եւ 6 օծ, իսկ ընդամենը 28,807 դիակ հնացնելով ինքնէ մարդկանց զիակները: (La médecine modern).

Աերունդ ենք, որ արեկի վերջին ձառագայթ ների հետ՝ պէտք է մայր մտնեն և մեր յուսոյ վերջին նշոյները:

Յայց ահա մեր ականջին հնչում է պրազան երգի խոսքերը, և չ միամին ի Հօրու լոյս փառաց ընդնմու և մեր միտքը ուլանում է դէպի այն երջանիկ ժամանակը, որի համար երգուած են այս նույիրական տողերը: Մեր հոգու առաջ կինդանուում է Հայի հոգեոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հակայ անձնաւութիւնը իւր կինսարեր գործունելու և հետեւնքներով: Սա անձնուագործ մի արձան կանգնեց աւելի տեսկան և աւելի խօսուն, քան պղնէն ու երկաթը, բայց և այդ անձնուագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շնչքը, որը սակայն Հայի վերածնութեան աւագանն է եղել գարեւ ի գար: Դարեր են եկել գարեր անցեր, բայց նա հասաւառն խարիսխ է, մընացել մեր գոյսւթեան համար: Սա իրեւ կինդանի վկայ՝ ականատես է եղել իւր որդւոց զիսին հասած անդուր աղետներին և իրեւ գմառատ մայր միսիթարութեան և սփոփանքի աղրիւներ է հոսեցրել նոյցա սրաի մէջ: Շատ անզմութիւններ և աւերութներ է աեսել նաև, բայց ամեն անգամ էլ վերակենդատնութեան յոյս ներկնել յուսահար սրաերի մէջ: Այսօր ես, երբ մեր մաքի առաջ պարտող պատիկները հազարաւոր Հայերի յօշտուած զիակներն են, երբ մերկ, սովագլուկ որբերն ու այրիները կանայք և աղամարդիկ հեռնեց իրենց սրբազն երկրից՝ օապից աւելի լաւ ասած, մահուան դռներն են բաղխում, և երբ Հայերնիքի և եկեղեցու փառակների փաշին ամեն կալմից վեր է բարձրանում՝ սրբազն երգի խօսքերը միշեցնում են մեզ, որ գեռ ևս ամեն ինչ կորած չէ, թէ գեռ ևս կանգուն է Հայութեան և յուսոյ Խորբան, Մայր Աթոռ և Եջմիածնիք:

Քայցը և նույիրական անուն:

Ե՞րբ է եղել Հայի օրը այնպէս ուեւ ինչպէս այժմ: Ե՞րբ է եղել նորա աղամարդան աւելի մուալի և յուսահար քան այժմ: Բայց այսօր ևս Մայր տաճարի սրբազն կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարոզը՝ «կայք շինեսցուք սուրբ զլորանն Լուսոյ», ինչպէս

## Ա Զ Գ Ա Յ Ի Ն.

### Լ Ա Խ Ա Խ Ո Ր Զ Ի Կ Ո Հ Բ .

Եկայի շինեցուք սուրբ զլորանն Լուսոյ:  
Եարական.

**Մ**եր բաղդի անիւը այսօր մի տարօրինակ շրջան է, կատարում: Մեզ թուում է, թէ մի կործանիչ ոյժ իւր զօրութեան ազգեցութիւնն է տարածում մեր բովանդակի կանքի ամեն մի շրջանի վերայ, և թէ մենք արիւնով ներկուած վերջալոյսի ականատես մի

խորհրդաւոր է հնչում այդ կոչք, երբ հոգեոր և բարոյական աւերակները մէկ մէկու տեղի են տալիս:

Սրբազն երգիչը հիմնուելով լուսաւորչի տեսիլքի վերայ՝ այս հաստատութիւնը և ուսույ Խորան» է անուանում: Դորանով որշուած է և նորա կոչումը: Նա հիմնուած էր հոգեոր գասահարակութեան մայր լինելու, նորանից պիտի բջիկին աւետարանի լուսոյ ճառագայթները հայութեան սրտի խորքերը լուսաւորելու: Անցեալից գիտենք մենք, որ նա հաւատարիմ է մասցել այդ կոչման: Եկեղեցին հայութեան հոգեոր քաղաքակրթութեան լուսաւորութեան փարոսն է եղել միշտ: Հայի հոգեոր և մտաւոր շարժման արդիւնքները համարեա առանց բացառութեան լուսոյ Խորանի աղբիւրներից են բջիւել Դիր, մատենագրութիւն, սրբազն արուեստ, հոգեոր կեանք, այս բոլորը մեր եկեղեցու շնորհն է, որ մենք վայելելու բաղդ ունինք: Նա մեր հոգեոր վերածնութեան որորանն է եղել երբ խաւարն ու մահը մեղ կլանել են սպառնացել:

Այսօր ևս երբ լուսաւորչի հոգին մեր եկեղեցու աւերակների վերայից վերաշնութեան հրաւեր է կարգում: մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգեոր վերածնութեան ճանապարհը: Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է: Փրկչի խօսքը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ աւեսանել զարքայութիւնն Աստուծոյ» կարելի է և ազգերին ուղղել: Կրօնն է, ճշմարիտ կեանքի աղբիւրը, \* ուրեմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ: Մ'եր ներկայ կեանքը լի է վերքերով: Մ'եր կեանքը լի է հիւանդ երեսյթներով, որոնք իրենց կողմից ամենածանրն ըետեանքներ են յառաջ բերում: Հոգեոր են այդ վերքերը, հոգեոր զէնքերով էլ պէտք է դոքա ապաքինուին:

Մ'ենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյժի դէմ: ուստի և մեզ զէնք է

պէտք, ոչ մետաղից, այլ Աստուծոյ հոգւով կամած: Նա աւելի սուր է և կարուելի քան երկաթն ու պողվատը: Ժամանակը ծանր է և լուրջ, իսկ մենք թեթև ենք և անհեռատես, ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում և գործ, իսկ մենք օդային ամրոցներ ենք կառուցանում և բաւեր արտասանում: Մ'եր անկեղծ համոզմամբ ճշմարիտ վերակենդանութեան աղբիւրը կրօնական վերածնութեան մէջ պէտք է որոնել: Մ'եր եկեղեցին պէտք է աւելի բարոյական ոյժ, կենսատու զօրութիւն ունենայ, եթէ մենք յուսալից մի նոր կեանք սկսել ենք կամենում:

Արդ Մայր Աթոռն է այն կեղրոնք, որ անզից հայութեան համար հոգեոր, կրօնական կեանքի մի նոր հօսանք պիտի սկսուի: «Օրէնք ի Սիոնէ եցէ», Այսեղ է հասաւատուած լուսաւորչ՝ Հայաստանեայց վերածընութեան հօր՝ սուրբ գաւազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հոգուել: Այսեղ ևս պէտք է նորա հոգին, որ հայի վերածընութեան սկզբնաւորութեան առիթն է եղել միշտ կենդանի և միշտ գործունեայ ֆնայ: Ծոյն հոգին և այսօր սրբազն երզի բերանով Մայր Աթոռի մարանութեանն է ուղղում իւր հրաւերը: «Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ:

Դարեզին Մարկարագ.

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ե Յ Բ Շ Թ Ո Ւ.

Ամսոյս 9-ին, 10-ին և 12-ին հանդիսաւոր կերպով կատարուեցան ս. Հռիփումիլի, ս. Դայիհանելի և Ծողակաթի վանքերի տօները: Առաջին երկու տօներին ս. պատարագին ներկայ գտնուեցաւ Ազգիս Վեհավառ. Հայրապետը:

Շարաթի, ամսոյս 14-ին ս. Դրիգոր լուսաւորչի են ի վիրապէն տօնը կատարուեցաւ Մայր ատձարում հանդիսաւոր կերպով: Այդ օրը ս. պատարագ մատոց գեր. 8. Եսայի արքեպիսկոպոսը իջման սեղանի վերայ:

\* Ցես կրօնական բաժնի առաջնորդող՝ Արօնի կննատու զօրովթիւնը: